

Իսկ Հոռոմի մէջ թատրոնը թէեւ բացօդեայ էր, բայց հանդիսավայրին վրան մեծ լաթերով կը ծածկէին, արեւէն կամ անձրեւէն պահպանելու համար, որովհետեւ ցերեկը կը տըրուէին ներկայացումները:

Պոմպէոս եղաւ առաջին անգամ փառաւոր թատրոն մը կառուցանել տուող:

Հոռոմէական թատրոնին մէջ ալ, տեսարանը եւ անոր վերաբերեալ ուրիշ ամէն հանդերձանք յունական թատրոններուն նմանութեամբը չինուած էին. միայն սա տարբերութիւնը կար, որ հոռոմայեցիները պարը վերցնելով անոր տեղ վարագոյր դնելու սովորութիւնը մտցուցին՝ արարուածները իրարմէ զատելու կամ դերասաններուն հանդիստի հնարաւորութիւն տալու համար: Ծերակոյտին եւ պետական պաշտօնատարներուն համար մասնաւոր տեղեր սահմանուած էին. իսկ հասարակ ժողովուրդը խաղը չսկսած թուանշան մը կ'առնէր եւ ետքը նոյն թիւին համար որոշուած տեղը կ'երթար:

Հայաստանի մէջ թատրոնը անպայման իր շէնքը ունէր: Բայց այդ շէնքը խնջոյքի վայր էր միանգամայն: Բակուրի հարսնիքին նկարագրութենէն գիտենք, որ մէկ կողմէ ներկայացում կը տրուէր, մէկ կողմէ խնջոյք տեղի կ'ունենար: Նոյն իսկ կոչնականները այնքան մօտ էին դերասաններուն, որ անոնցմէ մէկը Պոմպէսեթրէս՝ խանդավառուած՝ միջամտեց խաղին եւ դերասանի մը ձեռքէն առաւ Կրասսոսի դուրսը:

Դ. ԴԱՐՈՒՆ

Քրիստոնէութիւնը, առհասարակ, բնաջնջեց հին արուեստին շատ մը հետքերը: Քրիստոնէութեան առաջին շատ մը դարերուն մէջ արուեստները ապրեցան գրեթէ հոգեվարքի մէջ, մինչեւ որ դարերու ընթացքին դարձեալ կերպարանք ստացան անոնք այս անգամ քրիստոնէութեան շունչին տակ:

Այդպէս եղաւ նաեւ հայոց մէջ: Երբ Գրիգոր Լուսաւորիչ եւ Տրդատ՝ քրիստոնեայ դարձուցին հայերը, իրենց առաջին գործը եղաւ հեթանոսութեան հետքերը ջնջել: Դժբախտաբար, մեզի անծանօթ կը մնայ, թէ ինչե՞ր զոհ գացին այս մաքրագործումին տակ: Որոշապէս սա միայն գիտենք, թէ հիմնայտակ ե-

ղան մեհեանները՝ իրենց արձաններով, մատեաններով եւ դանձերով, ու անոնց հետ նաեւ ամէն ինչ որ կը պահուէր կոատուններուն մէջ:

Ադաթանդեղոս, որ դրած է հայոց դարձի պատմութիւնը, մանրամասնութեամբ կը նկարագրէ սոյն մեհեաններուն կործանումը, ինչպէս Անահիտի եւ Տիրի մեհեանները Արտաշատի մէջ, Նանէի մեհեանը Թիլի մէջ, Միհրի մեհեանը Բագառայինջի մէջ, Արամադղինը՝ Հանիի մէջ, Անահիտի ոսկի արձանը՝ Երիզաձի մէջ:

Դժուար է ըսելը սակայն, թէ հայ արուեստը ի՞նչ գոհեր տուաւ քրիստոնէութեան: Սա միայն ստոյգ է, որ հայ ժողովուրդին վերէն ու բռնի պարտադրուած այս կրօնը չկրցաւ անոր հոգիին մէջէն արմատախիլ ընել հեթանոսական բարքերը, ու նաեւ՝ ինչ որ իրեն կը մնար հեթանոսական արուեստէն, — վէպ, երգ, պար, նուագ ու խաղ: Այս բարքերը դարերով յարատեւեցին հայ ժողովուրդին մէջ, նոյնիսկ այն տակն երբ արդէն վաղուց էր մոռցեր հին աստուածները:

Կէս դար ջէր անցեր հայոց քրիստոնեայ դառնալէն (300-303) յետոյ, երբ Հայաստանի մէջ վերստին ծնւոյր տուին հեթանոսական բարքերը, որոնք կ'երեւի անթեղուած էին միայն: Ապացոյց է սա, թէ հայ ժողովուրդը իր սըրտին խորը անլթար կը պահէր իր հին հաւատալիքը: Անլթար ջէր կրնար մնացած ըլլալ հին կրօնը, եթէ անոր հետ կապուած չըլլային հայ ժողովուրդին զուարճութիւն պատճառող բարքերը, — թատրոն, երաժշտութիւն, եւայլն, — որոնցմէ զինքը զրկած էր նոր եկեղեցին:

Ամենէն առաջ հայոց Տիրան թագաւորին (342-350) օրով Հայաստանի մէջ կը սկսին վերածնիլ հեթանոսական բարքերը: Հազիւ կէս դար անցած է քրիստոնէութեան պաշտօնական կրօնը դառնալէն յետոյ, եւ դեռ չեն ջնջուած հին սազմերը:

Տրդատ (326-330) եւ Սոսրով (338-342) կը ճնշէին ամէն մէկ հեթանոսական շարժում իրենց օրով: Տիրան աւելի թոյլ գտնուեցաւ, եւ ընդհակառակը ինք ալ հակեցաւ հեթանոսական բարքերուն: Իր օրով դարձեալ ծաղկիլ սկսաւ հեթանոսական մշակոյթը: Կաթողիկոսը, Յուսիկ, զայրացած այս բարքերու սպականութե-